



« 04 » մարտի 2009 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 21

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ) ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ) ՀԱՏԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱԶՄԱՎԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի N118-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի N309-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N432 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1337-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը՝ 2009 թվականին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման և բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) գնելու համար աջակցության տրամադրման և բնակարանների (բնակելի տների) հատկացման գործընթացը կազմակերպելու, ինչպես նաև այդ աշխատանքների թափանցիկությունը ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ստեղծել բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման և բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) գնելու համար աջակցության տրամադրման և բնակարանների (բնակելի տների) հատկացման հանձնաժողովը հետևյալ կազմով (*փոփոխվել է 2009 թվականի հունիսի 14-ի N92 հրամանով*)՝

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.Վարդանյան

ՀՀ քաղաքաշինության նախարար

Հանձնաժողովի անդամներ՝

Ա.Բախշյան

ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ

Ա.Մուսայան

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ

Լ.Ասլանյան

ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական

Ա.Մարգարյան

ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Կ.Տոնոյան

ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական

Ֆ.Ափինյան

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Խ.Գևորգյան

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի աշխատակազմի

	առողջապահության և սոցիալական աահովության վարչության պետ
Ռ.Քոչարյան	Ստեփանավանի քաղաքապետի տեղակալ /համաձայնությամբ/
Գ.Մանուկյան	Գյումրու քաղաքապետի տեղակալ /համաձայնությամբ/
Ք.Թադևոսյան	Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի բնակարանային ֆոնդի հաշվառման և բաշխման բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/
Մ.Պողոսյան	ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/
<i>Հանձնաժողովի քարտուղար՝</i>	
Ե.Աթայան	ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային ապահովման, բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ քաղաքականության վարչության պետ

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի N118-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված անձանց բնակարանների գնման վկայագրերի տրամադրման աշխատանքների կազմակերպման ժամանակ հանձնաժողովի կազմում ընդգրկել ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի միգրացիոն գործակալության փախստականների բաժնի պետ՝ Արայիկ Հարությունյանին:

3. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել՝

Ա. Պետրոսյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի անշարժ գույքի կադաստրային գնահատման և համակարգված դիտարկումների վարչության պետ
Լ.Բարսեղյան	Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ
Վ.Թունասյան	«Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ
Հ.Մելքոնյան	Հեռուստալրագրող

4. Սույն հրամանի 1-ին կետով ստեղծված հանձնաժողովի գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է նախարարության աշխատակազմի բնակարանային և կոմունալ քաղաքականության վարչության կողմից :

5. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում են անձամբ:

Նախարար՝

Ի .Ի Յ ը¹³ ԿՅ³ Կ